Հավելված
Հաստատվել է ՀՀ ՎՊ խորհրդի
2018թ. մարտի 22-ի թիվ 8/10 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ (ՀԱՄԱՐԺԵՔ ԱՅԼ ՏՈՒՐՔԵՐԻ, ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄՆԵՐԻ) ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԵԳՐՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ, ԴՐԱՆՔ, ՈՐՊԵՍ ԵԿԱՄՈՒՏ, ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՄԱՏԵՂ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2018

Վերահսկողության հիմքը	«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 5-րդ հավելվածի 53-րդ կետը, Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բարձրագույն վերահսկողական մարմինների կողմից համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացնելու մասին 2017 թվականի մայիսի 12-ի համաձայնագիրը, «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի զ) կետը և Վերահսկիչ պալատի խորհրդի 2017թ. մայիսի 2-ի թիվ 9/1 որոշումը:
Վերահսկողության նպատակը	Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից՝ ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ հավաքագրումների) գումարները հաշվեգրելու և բաշխելու կարգի կիրառման նկատմամբ հսկողական միջոցառման իրականացում:
Վերահսկողության օբյեկտները	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն (ք. Երեւան), Բելառուսի Հանրապետության ֆինանսների նախարարություն (ք. Մինսկ), Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանի կոմիտե (ք. Աստանա), Ղրղզստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարան (ք. Բիշքեկ), Դաշնային գանձապետարանի միջտարածաշրջանային գործառնական վարչություն (ք. Մոսկվա), Դաշնային գանձապետարան (ք. Մոսկվա):
Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածը	2016 թվականի հունվար-դեկտեմբեր:
Վերահսկողության կատարման ժամկետը	2017 թվականի մայիսի 12-ից մինչև 2017թ. նոյեմբերի 30-ը ներառյալ:
Վերահսկողության մեթոդաբանությունը	Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել են դիտարկման, ստուգման և վերլուծության ձևերը: Վերլուծության փուլում վերլուծվել և ամփոփվել են ստուգման արդյունքները:

Համատեղ վերահսկողական աշխատանքների վերաբերյալ

Համաձայն Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բարձրագույն վերահսկողական մարմինների կողմից համատեղ վերահսկողական միջոցառում իրականացնելու վերաբերյալ համաձայնագրի և միասնական ծրագրի, 2017 թվականի մայիսի 25-ից մինչև հուլիսի 14-ը ԵԱՏՄ անդամ պետությունների լիազորված մարմիններում (գանձապետարաններում) իրականացվել են համատեղ վերահսկողական միջոցառումներ:

Վերահսկողական միջոցառումների ընթացքում յուրաքանչյուր վերահսկողության օբյեկտում կազմվել են համապատասխան ակտեր, որոնց ամփոփումից հետո կազմվել է հաշվետվություն, որը հաստատվել է 2017 թվականի նոյեմբերի 30-ին կայացած (տեսակոնֆերանսի տեսքով) ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն վերահսկողական մարմինների համատեղ կոլեգիայի որոշմամբ: Վերահսկիչ պալատի կողմից հաստատված հաշվետվության նախագիծը դեռևս 2017թ. դեկտեմբերի 20-ին ուղարկվել էր պաշտոնական թարգմանության, որի հայերեն տարբերակը ստացվել է 2018թ. հունվարի 25-ին:

Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատը, որպես վերահսկողական միջոցառումների կազմակերպիչ և համակարգող, հաստատված հաշվետվությունը ստորագրման նպատակով, այբբենական ընթացակարգով ուղարկել է ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն վերահսկողական մարմիններին: Հաշվետվությունը ստորագրվել է Ղրղզստանի հաշվիչ պալատի, ՀՀ վերահսկիչ պալատի, Բելառուսի պետական հսկողության կոմիտեի ղեկավարների կողմից և ուղարկվել է Ղազախստանի հաշվիչ կոմիտե: Ղազախստանի հաշվիչ կոմիտեի կողմից հաշվետվությունը ստորագրվելուց հետո այն ուղարկվելու է ՌԴ հաշվիչ պալատ, սակայն կատարված հարցումից պարզվել է, որ 2018 թվականի մարտի 15-ի դրությամբ ՌԴ հաշվիչ պալատը հաշվետվությունը չի ստացել և հաշվետվությունը դեռևս չի ստորագրվել բոլոր բարձրագույն վերահսկողական մարմինների կողմից:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, իրավական ակտը (տվյալ դեպքում համատեղ խորհրդի որոշումը), ընդունված է համարվում իրավասու պաշտոնատար անձանց կողմից այն ստորագրվելու օրվանից, հետևաբար կարող ենք արձանագրել, որ բարձրագույն վերահսկողական մարմինների կողմից հաշվետվության վավերացման գործընթացը դեռևս ավարտված չէ, այսինքն՝ փաստաթուղթը դեռ ուժի մեջ չէ:

Այսպիսով, ստորագրման գործընթացը ավարտվելուց հետո, ստորագրված հաշվետվության օրինակը ՀՀ վերահսկիչ պալատի կողմից ստանալուն պես, սահմանված կարգով 10 օրվա ընթացքում կներկայացվի ՀՀ Ազգային ժողով, դրա մասին տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության Նախագահին, ինչպես նաև 30 օրվա ընթացքում կտեղադրվի ՀՀ վերահսկիչ պալատի պաշտոնական կայքում: